Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

7955

№116

~~1315~~
4716

# ԿՏԱԿ

Սա՝ փրկագործ Չարչարանաց և Խաչե-լութեան Տեառն մերոյ և փրկչին

## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի Տասներորդութեան ամի Հայրա-պետութեան Տն և Տն Եփրեմայ Սրբընտիր Գերերջանիկ Կաթողիկոսի ամ Հայոց:

Տրամադրեալ և արտատանեալ ՚ի նորին Աճարեալ Արեւելեան խոնարհ ծառայ՝ նահապետ Գրիգոր Վարդապետ աշխարհիկոյ յետին ննջեալ Մայր Աթոռոյս ամ Հայոց որ յ Էջմիածին:

Յամի Տն 1820, Մարտի. 26:

Իսկ տպագրեցաւ իսկ Տէրսարար Հրամանաւ նորին Ծայրագոյն Արքեպ՝ ՚ի Ս Մայր Աթոռս լուսոյ ՚ի տպարանի Ս. Լուսաւորչին:

Յամի Տեառն ՚ի Ննջոյն. և ՚ի Թուիս Լուսաւորչութեան ամ ՌՄԿԹ.
Յուլիսի ամսոյ. 12:

29555




Սեանք մեռելոց՝ ածող   դի,
կենդանացո՛ մեռեալս յո   դի.
Հզօր խաչիդ՝ միջնորդու   թեամբ.
Զոր ներկեցեր՝ կողեդ ա   րեամբ.

## Կարգ Յաղագս Զարչարանաց և Խա-չելութեան Տեառն Մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի:

ՍՈՍԿԱԼԻ ՕՐՍ, սարսափելի՛ ժամս, սաստիկ ներգործութիւն աւուրս և սոսկումն ամենայն արարածոց. վասն այսորիկ՝ լայ երկինք, ողբայ երկիր, աշխարհ ծով և երերի ցամաք:

Քանզի անդ՝ ուր յաւիտենից ոչ է հնար ներգործել բնաւին կրից ինչ և տրտմութեանց, առագաստն անստուեր լուսոյ և անմատոյց խորանն ամենեղէն՝ այսօր անձառելի սգով լցեալ տեսանի:

Աստի և զինուորեալս մեր եկեղեցի անդ-րանիկ որդւոց վերնոյն սիոնի 'ի սուգ վար-կեալ՝ ահա՛ համաձայն գտանի:



Ապաքէն ժամ է այսօր՝ Յհնայամեայ մեծ նորոյս սիօնի, առնուլ զհամօրէն դասա_կարգութիւն եկեղեցւոյ մէջ, և յօրինել ողբս կսկծալի ընդ ողբերգու մարգարէին Երե_միայ։

Հապա աշխարեցէք եղբարք, սևազգեստ լերուք կրօնաւորք, լացէք քահանայք և պաշտօնեայք, կականս բարձէք համօրէն մանկունք եկեղեցւոյ։

Ո՞ւր է Թագաւորն մեր Քս, ո՞ւր տէրն ծնողեցս, ո՞ւր հայրն որբոց, ո՞ւր դատա_ւորն այրեաց, ո՞ւր քաջ հովուապետն մոլորել հօտիցս բանականաց, ո՞ւր ուրախութիւն տրտ_մեցելոցս, ո՞ւր հացն քաղցելոցս, ո՞ւր աղբիւրն ծարաւելոցս, ո՞ւր ամբիծ փեսայն հոգւոյ մերոյ, ո՞ւր կեանքն մեր յաւիտենական։

Ո՛վ սքանչելի ահաւոր տեսիլ՝ ծագի այսօր գթութիւն, ծաղր լինի խնամութիւն, սուտ հա_մարի ճշմարտութիւն, դատապարտի արդարութիւն, 'ի բաց մերժի երջանկու_թիւն, և մեռանի խնկական կեանքն։

Կենդանութիւն մարմնոյ հոգին է, և կենդա_նութիւն հոգւոյ՝ Քս, որ այսօր ահա առ 'ի մահ հանդերձեալ լինի։

Զորմէ աղաղեցուք հոգւոյն մէջ կանխա_ձայնեալ գուշակէր յառաջագոյն նախա_մարգարէն մովսէս որդւոցն իլի։



Եւ եղիցին կեանք քո՝ կախեալ առաջի աչաց քոց. և զարհուրեսցիս զցայգ և զցերեկ, և ո՛չ հաւա_տասցես կենացդ քոց։

Երկրորդ օրինաց՝ 28. գլուխ, 66. համար։

Արդարև՝ կենդանութիւն մարմնկային մահացու_թեան, էր կենդանական շնորհք անմահ_ութեան ճշմարտին, զոր երբեմն մերկացաք ճաշակմամբ պտղոյն, մեռաք հոգւով. և ահա՛ մեռանի կեանքն մարմնով, զի մեք կեն_դանասցուք հոգւով 'ի ձեռն կենդանացուցիչ կամաւոր մահուան նր։

Եւ քանզի վերանորոգել կամելով զխան_գարեալ բնութիւն մեր 'ի պէսպէս ախտից, առեալ զաշակերտսն իւր երկոտասան՝ ելա_նէ 'ի վերնատունն խորհրդոյ, և անդ տպա_ւորէ 'ի հոգւոց նոցին զհաւատ հաստատուն, զյոյս աներկբայելի, և զսէր անախտ, բաշխ_մամբ Ս. Տային կենդանարար Մարմնոյ և Արեանն իւրոյ։

Եւ յետ այսորիկ սկսանի ուսուցանել նոցա զայլ ևս զլուսափայլ առաքինութեան զհան_դէս, և նախ՝ զխոնարհութիւն՝ լուանալով զո_տս նոցա։

Այլ աստանօր միտք իմ տկար՝ ալէկոծի, և յետս կասեալ թուլանայ 'ի զարհուրանդին ճանապարհէ աստի, զոր հանդերձեալ է ըն_թանալ, քանզի ծանրաբեռնեալ է մեղօք



բազ

բազմապատկեսցէ մեղաց և անօրէնութեանց. մեծ
երթալով երթայ, և լայ, բայց ուր ար-
դեօք՝ ոչ ՚ի բաբելօն և ոչ յեգիպտոս:

Մինչ յայնկոյս կեդրոնեան ձորոյ՝ ՚ի պար-
տէզն գեթսեմանի. յորում ամենապայ-
ծառ ծաղիկն Յիսուսեցեալն մարմնով յար-
մատոյն յեսսեայ տապով արիւնաջոս քըր-
տանց խորշակահարի:

Ամենազօրն յօրինող դարաստանի, տնկօղն
բուրաստանի դրախտին եդեմայ՝ անդ ՚ի
վերայ ահեղահրաշ երեսաց իւրոց յերկիր
անկանի, հայցելով յերկնաւոր հօրէն իւր
մի՛ անցուցանել զդառնագոյն բաժակն պա-
տուհասի յանցանաց որդւոցս ադամայ. զայն
զոր արբոյց նախահօրն մերում ՚ի դրախտին
փափկութե, հո՛ղ էիր՝ ասելով, և ՚ի հող դարձջիր.
ծննդ. գլուխ՝ 3. համար. 19:

Այժմ ահա՛ ՚ի պարտիզի անկանի. և զամենայն
զսուրբ զերեսն իւր ՚ի հող երկրի մածու-
ցանէ. որպէս զհողացեալ բնութիւ մեր ՚ի նոյն
առաջին փառսն կենագործեսցէ. և է ան-
մահիցն դասակարգեսցէ հրաշունն զօրաց լու-
սեղինաց:

«Ցամին պարտիզէ կեանքն մեր Յս՝ լսելի
առնէ զձայն քաղցրութե և մարդասիրութեն իւ-
րոյ յունկն նախահօրն մերում ադամայ:
«Ադամ՝ ո՞ւր ես, յո՞րպիսի անարգանս.


յո՛ր

«յո՞րպիսի թշուառութիս, յո՞րպիսի ամօթ ե-
«րեսաց, յո՞րպիսի խիղճ մտաց, յո՞րպիսի աղէ-
«տարակուսանաց, ո՞ւր քո առաջին բարե-
«բաստութիւնն եդեմական դրախտանին.
«ո՞ւր քո հոգեղինայն զուգապատիւ ընտա-
«նութի. վն էր ոչ խօսիս ո՞վ ադամ, մի՞թէ
«ահաւոր ձևով երևիմ քեզ, մի՞թէ պա-
«կուցանօղ և ահարկու ձայնիւ վարիմ առ-
«քեզ, մի՞թէ սաստեմ և յանդիմանեմ
«զքեզ. որպէս երբեմն առ թզենեաւ ընդ-
թագնուլդ:

Բա՛ց զաչս քո և հայեա՛ց առիս, խնդրեմ
զքեզ այսօր ոչ ՚ի դատապարտել. այլ յաղա-
տել. ոչ ՚ի մահացուցանել, այլ ՚ի կեցուցանել.
ոչ յանիծանել, այլ յօրհնել:

Ահա՛ բառնամ զմեղս քո, լուծանեմ զպա-
նէծս քո, քաւեմ զպարտիս քո, ջնջեմ զյան-
ցանս քո:

Հանդերձեալ եմ ահա՛ ՚ի ժանեաց կերչաց
գազանաց զբնութիս քո ՚ի կեանս կորզել, և ՚ի
խորոց անդնդոց դժոխոց՝ ՚ի լոյս կենաց ան-
վախճանից ՚ի վեր հանել և ՚ի քաղաքս երջան-
կաց փառօք բազմեցուցանել:

Որ՛ ուրեմն որ ննջեալդ և կանգնեցա՛յ ՚ի մե-
ռելոց ՚ի հաստատուն ժառանգութե կենա-
ցըն յաւիտենից:

Ո՛հ մարդկայինս ձանձրացէր բնութե, վար-


դա

դատաւոն Յս զաղաւմ քաջալերէ, իսկ աշա-
կերտքն ՚ի քուն թանձրութե ննջեն բաղում
տարակուսանօք:

Օ՜ արթիր պետրէ, հայեաց առ ամենահեզ
երկնաւոր վարդապետին քո ՚ի քաղցրատեսիլ
աչացն արտասուաց հեղմունս գետորէն և ՚ի
յորդագոյն կայլակս քրտանցն արիւնոյակ,
յորմէ առատացեալք ոռոգանեն ահա զպար-
տէզդ գեթսամանի:

Ո՞ւր ՚ի դիմանէ ճառագայթութեն ոսկեհա-
ճանչ ամենափայլ լուսոյն ծաւալման, որ
՚ի լերինն թաբօրական:

Ո՞ւր գերազանցութի Ածայինն զօրա անճառ-
փառաց, ո՞ւր ծագումն արեգակնազօր երե-
սաց դորին հանդէպ հերմոնի. ո՞ւր խորանին
լուսափայլ ամպոյ ՚ի վր դորուն, ո՞ւր առ
դա դաւանութն հայրենի, թէ դմա լուա-
րուք, դա՛ է որդի իմ սիրելի. ո՞ւր մովսէս յղ-
մէ և եղիա յահեկէ. ո՞ւր դու և երկու որդի-
քն զեբեթեայ որք յայնժամ ՚ի նինջ ու-
րախութե էիք զմայլեալ. և աչաւորին ՚ի
քուն տարակուսանաց կայք թմբեալք:

Օ՜ արթիր զարթիր պետրէ, և զարթո զեղ-
բեղայրն յէ զյովհաննէս, զարթիք զ
յակոբու. և առէք զկարօտութի փափագա-
նաց ամենացանկալի երկնաւոր վրդպին ձե-
րոյ, դուցէ ցանկասջիք միում յաւուրց



դո-

գորչին, և ո՛չ գտանիցէք. քանզի աչաւորին
հանդերձեալէ թողուլ զձն. և երթալ առ
հայր, իմ թէ՝ Ելի ՚ի Հօրէ, և եկի յաշխարհ. դար-
ձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր: յօ՛՛ 16՝ 28:

Ո՞րդ ո՞վ հաւատով հարսնացեալ հոգի երկ-
նաւոր փեսային քո, լուր թէ զինչ բար-
բառէ առ քեզ սիրելին քո, ասէ՛ր խղճն՝ և
մրմռեն:

Մ՛ուտ առէ, ՚ի խոյն պարտէզ տքնութե իմոյ՝
քո՛յր իմ հարսն, եկ և տես զցաւս իմ, որոց
համբերեմ վս քո, հայեաց ՚ի յորդառատ
աղբերականս քրտանց և արտասուաց իմոց,
որովք զքեզ ոռոգեալ, պարտէզ ցանկալի և
դրախտ նռնենեաց վս իմ յարդարեմ. տե՛ս զի
զարդարել և զու զքեզ գունակ գունակ
ծաղկօք առաքինութեց և անուշահամ պտղ-
զովք բարեգործութեց, հրաւիրեսցես զիս ՚ի
վայելումն նոցին հոգևորական պտղոց իջցէ
ասելով եղբօր որդին ՚ի պարտէզ իւր, և կերիցէ
զպտուղ դարաց իւրոց: Երգ. 5՝ 1:

Ո՞ն դիցուք ապա և մեք զզըզօր որդին մեր
Յս խորը զինի՛ք ՚ի վր արտից մերոց, և տապա-
ւորեսցուք ՚ի տախտակ մտաց մերոց անջնջե-
լի, յիշելով միշտ զհեղումն Ածային արտասու-
աց և քրտանց նորին, որ վս յանցանաց և
մեղաց մերոց: Նաև այս յայնժամ կատարի ՚ի
մեզ, յորժամ վս սիրոյ նր յօժարաբար կրես



ցուք

ցուք զչարչարանս , մահացուցանելով զչոր
յօժարութիւս մեր և զախտս մարմնոյ և ե̄ զգա-
կելով զմիմ մեղաց և զննդութիւս, որք վա ան-
ուան նորա , տարցուք ամի նդ համբերութբ :

Բաշխեալ լինին յայսմ հետէ որջք չարագոյն
գազանաց. և դիմեալ հասանին ՚ի վր տն մե-
րոյ ոհմակք պատառօղ գայլոց , շունք կատաղի-
չանց , անդեայք պարրտգոյն ցլուց , խումբք
ոխակալաց , բազմութիւնք նենգաւորաց , հոյլք
հակառակորդաց , ժողովք ապերախտից , ջոկք
խստասրտաց , զօրք ամբարշտաց՝ որք մատնութբ
և առաջնորդութբ տիրանձանն և արծաթասէր
նենգաւորն յուդայի ջահիւք վառելովք ,
սուսերօք և բրօք գան ՚ի յափշտակել զան-
բիծ գառն Ք. Յ , զկենարարն մեր յմ̃ քս̃ . ո՜վ
զի զծոյնս նենգութե մտաց և նախանձու սըր-
տից իւրեանց թափեցեն ՚ի նա , էբրև զօձ
դարանակալ , հնացեալքն չարութբ :

Ո՜վ խորհրդական՝ բայց լի անօրէնութբ , ո՜վ
աշակերտ՝ բայց ժանտաժուտ , ո՜վ որդի՝
բայց կորստական , ո՞չ ՚ի քաղցրաղէտ ծածկա-
գէտ վարդապետէդ սկնածու և ո՞չ ՚ի քն
իսկ եղկելի անձնդ խնյօղ չորդրդիս դիզնդ
յուդաս , զմէ՞ հատուցանես չար փոխանակ բա-
րւոյ և ատելութբ զանձառ սիրոյ բարերարութ
վարդապետին քում , և կամ որո՞վ վստահութբ



մատ

մատչիս ՚ի համբոյր պղծանչելի դիմաց արար-
չիդ ո՜վ արտասուելի :

Այդ այն երեսքն է , ուստի սաւառնին սերո-
բէք , ամփոփին քերովբէք պարուրին պարք
լուսակերպից , երկնչին հրացմամբ բոլոր
պետութիւնք վերնոցն և միանգամայն խոկ դո-
ղան երկինք և երկիր յահէ փառաց ա̃ծութե-
դորա :

Իսկ դու ՚ի սարսափելի դէմս նր ծպրհեալ
նշանաւ սիրոյ՝ համբուրիւ մատնես ՚ի մահ
զմահու սարսափելին :

Ո՜ր նախատակոծ առնէ և նոյն ինքն բար-
ձիչն նախատանաց մերոց Յս :

Յո՜ւդա համբուրելով մատնես ասէ զորդի
մարդոյ , քաղցրութբ խօսես , բարեկամութբ
թշնամանես , քո այդ խաբէութի և նենգա-
ւորդ տիրանձանութի ոչ կարէ առաջի ամենա-
տես աչաց իմոց վերարկանաւ պատսպարիլ ,
ոչ դիմօք կեղծաւորիւ , և ոչ առերեսս բա-
նիւք խաբէել :

Սակայն զի՞նչ օգուտ աստի եղկելւոյն յու-
դայի , որ ահա՛ փոխանակ ՚ի զերծ գալոյ , անկարէ
սուգունդս զինուորացն ըմբռնել զՅս , և
կապել զձեռս նր պնդապէս , և ածել մինչև
՚ի դրունս քահանայապետիցն զգուշութբ ,
ո՜վ զի աստացի ՚ի նոցանէ զխոստացեալն ինքեան
զերեսուն արծաթին , զգինանցն Ք̄ անգաւորին



մի

փոխանակելով.

Եւ մինչ չարաբարոյ խումբքն գուեհիկ և անմիտ զինուորաց՝ ընդ ականարկութեամբ յուդայի, անձապարեն ըմբռնել զՅս, ջերմեռանդ աշակերտն նորին պետրոս ընդդիմամարտի ընդ նոսա և հարեալ սուսերբ զծառայ քահանայապետին 'ի բաց հանէ զունկն նորա:

Իսկ Տէրն մեր արգելու զնա՝ ասելով, զինչ գործես պետրէ, դարձո՛ անդրէն զսուրդ 'ի տեղի իւր, զի ամենեքեան որք առնուն սուր սրով անկանին, որպէս յորինեն Մատթ'' 26՝ 52. Յով'' 18. 11:

Հրաման յինէն ընկալար ո՛չ ունիլ զմախաղ և ո՛չ զերկուս պատմուճանս, այժմ զսուր 'ի կիր արկանես, սիրել զթշնամիս, բայց առնել ատելեաց, և աղօթս 'ի վերայ լլկողաց և հեծեցուցց պատուէր առեր՝ զմի՞ այժմ գժտիս և զինուորել խիզախես. ո՛չ լուար՝ զի ասացի, եթէ ոք հարկանէ զաջ ծնօտ քո, մատո՛ նմա և զմիւսն. ապաքէն ամփոփեա՛ զսուրդ:

Մի՛ հակառակիր ով պետրէ ընդ դէմ համախարհական փրկութեան ամենայն ընդ դէմ իմոց կամացս. զի նախքան զլինելն աշխարհի՝ սահմանեալ է մահ իմ 'ի փառս ձեր:

„Պարտաւորեցաւ ստեղծուածն իմ առա-
„ջին 'ի ձեռն կողին, խանգարեցաւ պատկե-
„րն Թագաւորական, մահու դատապար-
„տեցաւ կերպարանն իմ, գերի վարեցաւ


ծառայն

„ծառայն իմ, ո աղանաբեկ եղև ոչխարն իմ,
„ո՛չ ոք է որ փրկէ զնա. և ո՛չ այն՝ որ 'ի թիկունս
„հասանի նմա, ո՛չ ոք է, որ կենդանացուցանէ
„և ո՛չ՝ որ զգերին դարձուցանէ. նմին իրի
„պէտ և արժան է ինձ մեռանիլ 'ի վերայ նորա, և միջ-
„նորդութեամբ կենդանարար մեռելութեան իմոյ զհայ-
րըն իմ 'ի հաշտութիւն ածել ընդ նմա:

Դարձուցանէ ապա զբանն առ 'ի վերայ եկել ամբոխին և ասէ իբրև 'ի վերայ աւազակի՞ ելէք սրովք և բրօք ունել զիս, հանապազ ընդ ձեզ 'ի տաճարին նստէի և ոչ կալայք զիս. այլ այս ձեր ժամն է և իշխանութիւն խաւարի: Մատթ''. 26՝ 55: Մարկ'' 14՝ 48. Ղուկ'' 12. 53:

Մայսորիկ 'ի գիշերի ունիք զիս և մեկուսի 'ի ժողովրդենէն, զի ձերոյ գողութեան և չարագործութեան պատշաճ և յարմար ժամ՝ է ժամս խաւարի, և ո՛չ լուսոյ, գիշերն, և ո՛չ տիւն. քանզի դուք և ամենայն ամբարիշտք, որք գաղտագողի գործեն զչարիս, ունին ինքեանց յատուկ ժամ, զժամս խաւարին. իսկ ես որ լոյս եմ աշխարհի, 'ի տունջեան և 'ի լոյս ժամու իմում քարոզէի և ուսուցանէի զձեզ:

Արդ՝ ահաւասիկ եմ պատրաստ, և զոչինչ ընդդիմութիւն առնեմ ձեզ. ուստի կալարուք զիս որպէս և կամիք, և ածէք զիս ուր և հաճիք:

Իբրև տեսին աշակերտքն՝ թէ կամաւ մատնեաց զանձն, և ո՛չ է հնար զերծանելոյ, Թողին զնա և փախեան. Մատթ''. 26՝ 56. Մարկ''. 14. 50:


Եւ

Եւ անողորմութեան այնորիկ կապեալ զՅս՛ հայհո-
յելով, և անարգելով, դատաւորակիլն լինի
նախատանօք ածեն առ քահանայապետսն։
Իսկ նա հարցանէ զՅս, թէ զինչ ուսու-
ցանէիր, և յինչ պէտս էիր ժողովեալ զա-
շակերտսդ․ առ որ ասէ յՍ՝ զի՞ զիս հարցանես,
հարց զայնոսիկ որ լուանն․ զի ես յայտնապէս, խօ-
սեցայ․ և առ այսպիսեաւ չարութեան պատասխանւոյն,
ապտակէ զՅս, ասելով՝ այդպէս պատասխանի տաս քահա-
նայապետին․ ասելով։ Յո՛․ 18՝ 21։
Զինչ արդեօք ժամանակացն էր զայս, սարսե-
ցաւ երկինք, զարհուրեցաւ երկիր յերկիւղն
մտածութեան և ի չարչարանաց ծաղրին։
„Սաստիկ խրատական գոչէ տէրն Նարեկացին․
„սխրալի՛ մարդասիրութի՛ն ապտակելի՛ ներ-
„ղութի՛, ատելալի՛ երկայնմտութի՛, անքակելի՛
„քաղցրութի՛, փառաւորելի՛ հեզութի՛․ ընդ նմին
և սքանչելագին հրաշից նորա։
„Ով՝ կամաւ զանձնկալեցին կապեալ ըղձեալսն
„արձակողին․ ի յապարանսն տանէին կայի-
„աֆայ և աննային․ ծառայն զերեսն այն ապ-
„տակէր՝ յորմէ սրովբէն թևածօղէր․ թո՛ւք
„արձակեալ պինդ բերանով յայն որ կուրին
լոյս ծագեաց թքո՛վն։
Ասէ զինչ հեզն և հանդարտն Յս․ եթէ չար ինչ
խօսեցայ՝ վկայեա՛ վասն չարին․ իսկ եթէ բարւոք, ընդ-
է՞ր հարկանես զիս։ Յո՛ 18՝ 23։



Հա

Հայեցարո՛ւք յատեանն յն ալեկոծ և խռո-
վութ՛ ի շփոթմա անիրաւատութե՛, հարցա-
նէ քահանայապետն Թագուն և նենգաւոր
և ՅՍ պատասխանեաց ուղղութ՛ և իմ պատշաճի։
Արդ՝ զինչ արժանէր առնել, եթէ ոչ կշ-
տամբել զնա․ և կամ ընդունել զպատասխանն․
բայց ոչինչ լինի․ այլ ծառայն հարկանէ զնա․
ուրեմն ոչ է ատեան, այլ անիրաւութե և բռնու-
թեան իսկ թէ՝ ոչ է ...
... Մար՛ 10՝ 26։
Սկսանի վերստին երդմամբ հարցանել կայի-
աֆա․ երդմնեցուցանեմ զքեզ ասէ յԱյ կենդանւոյ, եթէ
դու ես Քս որդի Այ օրհնելոյն։ Մտթ՛ 26՝ 63․ Մար՛ 14՝ 61։
Եւ ՅՍ թէպէտ գիտէ զնենգութիւն նո-
րա հարցմունքն՝ այլ ուղիղ տայ զպատասխանին և
զճշմարտութեանն իւր ի հօր՝ յայտնէ զպա-
տիւ, զի անպատասխանի արասցէ զնա ի դատաւորն։
Յայնմհետէ տեսանիցէք ասէ զորդի մարդոյ նստեալ
ընդ աջմէ զօրութեանն Այ, և եկեալ ընդ ամպս երկնից։
Մտթ՛ նոյն գլ՛ 64․ Ղուկ՛ 22՝ 69։
Իսկ առ այս քահանայապետն՝ զի անձեցուս-
ցէ զամբաստանութիւն, պատառէ զպատմու-
ճանն և ասէ հայհոյեաց, զի՞ ևս պիտոյ են մեզ վկ-
այից․ Մտթ՛ նոյն գլ՛ 65․ Մար՛ նոյն գլ՛ 63․ Մար՛ 62։
„Զայս առար զինչ էր հին և պատուաւոր ...
„որ ոչ հանդուրժեալ նորա նարգ...
„ն... վառելոյ հերձեալ պատառեցաւ ի
բանից ասաց։



Եւ

4716a

Ա՜յ ամէն անօրէն ծերքն դպիրքն և փարիսեցիք մահապարտ է. և հրամայեն անգութ սպասաւորացն թքանել յերեսս դէմս քո և ապտակել. ծաղրել զգլուխն և այպանել. հարկանել և ասել. մարգարէա՛ց մեզ Քրիստոս՝ ո՞վ է որ եհար զքեզ. մատթ. 26. 68. մար. 14. 65. ղուկ. 22. 64.

Աւա՛ղ տխմարդոյն ազգին հրէից որք ջանային յիմարաբար թագուցանել ի ձորձով զձեռս գայթակղեալ իմանալի արեգակն, զամենագէտ արարիչն, զամենահայեաց և զնախատեսող աչքն. զանպարագրելին երկնի և երկրի, ծովու և ցամաքի։

Իմացարո՛ւք անզգամք ժողովրդոց և անմիտք մինչև յերբ ո՛չ առնուք ի միտ թէ դա՝ որ շնորհեաց ծածկագունից յայտնի գոլ, ո՛չ կարէ գիտել թէ ո՞ եհար զինքն. դա՝ որ տնկեաց զունկն՝ ինքն ո՛չ լուիցէ. դա՝ որ ստեղծ զակն, ինքն ո՞չ տեսանիցէ, դա՝ որ պարգևիցէ շնորհաց մարգարէութեան և իմաստութեան, ինքն ո՞չ մարգարէասցի. ո՛վ յիմարք և որդիք կորուսթեան, դա՛ է միանգամայն ծով գիտութեան և խորանդունդ իմաստութեան, որ ահաւադիկ անկեալ կայ առաջի ձեր այսօր անարգեալ և անգոսնեալ, դա՛ է որ ունի հատուցանել ձեզ ըստ անօրէնութեան ձերում, և զսերկեանս ձեր հարցման հանդերձեալ է յայնժամ տալ զպատասխանին յաղթող արդարութեան իւրում



ցու-

ցուցանելով յանուանս թէ այսօր և այժմ ... որ է հարն զիս. և ո՛չ զղջացաւ, կապեցէք զդորա զոտս և զձեռս, և հանէք ի խաւարն արտաքին։

Գովեմ զքո անողորմ հրեշտակք՝ զքո այն ծածկեցէք զսպառամիտելի գլուխ ... մերոյ քնի. զի մի բժշկել մեղօք աչաց ձերոց տեսանել զամենայն երևանորին, խայթեալք լինիցին ի սոսկալի և ի պատկառելի դիմաց անտի։

Սա այն ծածկեցէք զմեզ ի մի խաւարաւ ... ձեռամբ նկատել զողորմելի հայեցուածս քո, ի գութ շարժեսցի քաւիչ ... ձեր ի վեր փթթած որդւոյն մոյ։

Ո՜վ անճառելի համբերութեան քո, որում վերք ի վերայ վիրաց և ցաւք ի վերայ ցաւոց մի զինի մոյ ան է հաստ ժամանել հասանելին։

Ընդ զի ի մեջ ամենայն նուագի ... ձայնեցեալ ... ի տանջելում հանդերձի ... քահանայապետի կատարել լինելի և բանն այն զոր քահանայապետն ասէր ցպետրոս թէ ... մատթ. 36. ... խօսեցայ ... մար. 14. 3 ղուկ. 22. 34։

Ընդ զի պետրոս ոչ ունելով ժուժ մեկնելոյ յամենասիրելի վարդապետէն իւրմէ՝ գայ զհետ նորա մեծաւ ջերմեռանդութեամբ տեսանել զլատարածն։ Սա՜ ի մտանելն է դուռն ... ւորն դատաւորին մինչ հարցն ցնա



բա-

ծնա բարապան դրանն, խնկոյն աւրանիդ պետ-
րոս զոհէր:
Ո՜վ պետրէ՝ ոչ խոստացար պարծանօք թէ
զանձն իմ եդից ՚ի վ(եր)այ քո, արդ՝ զի՞նչ եղե
զի և ո՛չ գոնեայ դռնապանիդ տանիս հարց-
ման, մինթէ զօրական ոք է որ հարցանէ, մինթէ
յայնցանէ, որք ունէին:
Դռնապանէ անարգ և արհամարհեալ, նա
և ո՛չ հարցուածս ջաջուե ինչ, Ա՛յլ ոչ ինչ
յայսցանէ պետրոս: Այս եղև առ նա երկիցս
և երիցս և հաւ խօսեցաւ:
Դառնայ տէր և հայի ՚ի պետրոս ըն դուռն
բանտին արտասուաթոր և քաղցրալօք՝ օրինակ
իմն իբրև ջերմացուցիչն ճառագայթ գար-
նանայինն արևու ներգործեալ ՚ի ձիւն կամ
՚ի սառն:
Ո՜վ պետրէ՝ մի՛ վհատիր՝ առէ, վասնզի թո-
ղում զմեղս քո. և ընդունիմ՝ զքեզ այնպէս՝
իբրև թէ բնաւ իսկ չես մեղուցեալ:
Հա՛պա քաջալերեա՛ց և զօրացի՛ր:
Դարձ՝ առ իս, զի ահա՛ ես դարձել կամ առ
քեզ. քանզի ես՝ որ զքեզ կացուցի վէմ, ո՛չ
յետս կոչեմ զպարգևս իմ, զի անզղջ են
շնորհք իմ:
Զփականն՝ զոր խոստացայ, ո՛չ առնջանամ
՚ի խոստմանէս, այլ տամ քեզ զայն յետ
յարուէն ըն անշուշտ խոստման իմում:


Ա՛ղ

Ա՛ղէ քաջալերեա՛ց և մի՛ վհատիր, և մի՛ ամա-
չեցուցէ զքեզ տկարութի(ւն) քո, այլ հաւատով
և յուսով եկ ՚ի վ(եր)այ երեսաց ջուրց ընդունել զի
արտասուաց ո(րոց) երբեմն ՚ի ծովակին գեննէ-
սարեթայ:
Զօրացի՛ր ուրեմն զօրացի՛ր ո՛վ պետրէ, և ես
ընդունիմ զքեզ շնորհօք ամենազօր մարդա-
սիրութ(ե)ան իմոյ:
Իսկ պետրոսի եկեալ ՚ի յուշ՝ սկսանի զըղջ-
մամբ և դառնաթոր արտասուօք զայս բար-
բառել. վա՜յ ինձ՝ աւա՜ղ հեգացելոյս, որ ՚ի
ձկնորսութէ յառաքելութ(ե)ան կոչեցայ, և ահա
զկոչօղդ երիցս ուրացայ, վա՜յ ինձ, որ զքեզ
անժամանակ ծնունդ հօր(ն)յ դաւանեցի. և
ահա զառաջինն դաւանեցեալդ ուրացայ
երրակի. վա՜յ ինձ, որ առ ՚ի քէն անշարժելի
վէմ անուանեցայ, և ահա յանտահմի՞ աղջ-
կանէ միոյ յերկիւր գլորեցայ. վա՜յ ինձ, որ
զանձն իմ պարծանօք դնել ՚ի վերայ Տ(եառ)ն դ(ի)
խոստացայ, և ահա ուրացուցի ՚ի յսկեզբն
կայպայնաց սիրոյ քոյլուծայ. վա՜յ ինձ՝ չեմ ար-
ժանի կոչիլ առաքեալ քո և աշակերտ, խոս-
տովանիմ զշնորհսն, բայց պատկառիմ յան-
ցանօքս, զի զառեալ բարիսն քո կորուսի.
ո՛չ կարեմ այն համբառնալ, և զերեսս ամեն-
օրհնեալ մարմինդ ամբիծ մօր քո տեսանել, վ(ասն)
ամօթապարտ լինելոյս ուրացութ(եան)ս իմով
զանզղանալիդ:


Անայ

Մ՛նայ ինձ յայսմհետէ իբրև զգաւառ չորքին, որոտալեկ՝ որոտաթափ և որոտաձայն, լալ, հեծել, յոգւոց հանել, աշխարհել զցայգ և զցերեկ զամ աւուրս կենաց իմոց:

Ո՛ն և մեք ամենեքեան միաբանութեամբ օրինակ առցուք մեզ զերանելին զպետրոս՝ կալ և մնալ միշտ հաստատութեամբ ՚ի գործս բարութեան, յիշելով զզարհուրելի անցելոց մեղաց մերոց։ Որովք գրեթէ ուրացաք և մեք չար գործովք մերովք զարդարն և զանարատն, ոչ երիցս միայն, այլ բազմիցս և միշտ. յորոց և ոչ ինչ շահեցաք:

Այլ ընդդէմ մեզ այն անխրատութեան զարդարութեան դնել զխնայութիւն. ողորմութեան զմեղս, ատութեան զչարութիւն, ձանձրութեան զժուժկալութիւն:

Զ՛աչս մեր յարտասուս, զլեզուս յաղօթս, զլսելիս յունկնդրութիւն պատուիրանացն Տ՟ն և զձեռս յողորմութիւն աղքատաց կրթելով:

Այլ մանաւանդ ՚ի սարսափելի ժամուս յայսմիկ [illegible] ցաւակից լիցուք ամենափրկիչ Տեառն մերոյ:

Զ՛որ ահա՛ հանեալ ՚ի բանտէ, ձաղկեցմանն, ածեն ՚ի վաճառն կայիափայ յատեանս դատաւորին պիղատոսի մեծաւ նախատանօք. թքալից դիմօք, կապեալ ձեռօք, կապուտակեալ երեսօք՝ այտուցեալ և վշտակիր անձամբ: Զրախօսելով առ դատաւորն զօր զնա,





Թիւրօղ օրինաց և խռովեցուցիչ ազգին իւրեանց:

Իսկ ամենահեզ գառն Յիսուս կայ առաջի դատաւորին խոնարհ գլխով, պայծառ և մեղմ դիմօք, սակաւ խօսիւք, ՚ի վայր անկեալ աչօք, պատրաստ ՚ի նախատինս՝ յօժար ՚ի հարկանումն:

Զ՛որ քննեալ պիղատոսի, ո՛չ գտանէ ՚ի նմա ամենևին, և ո՛չ զնշան ինչ արժանի դատապարտութեան:

Ուստի կամելով արձակել զՔ՛րն, ասէ ցհրէայսն զի՞նչ չար արարեալ իցէ դա, ես վնաս մահու ոչ ինչ գտանեմ ՚ի դմա: ղուկ'' . 23` 22` յօ'' . 18` 38:

Այլ նոքա աղաղակեն և ասեն՝ թէ ՚ի խաչ հան զդա, զի եթէ ոչ էր չարագործ, ոչ մատնէաք զդա: մատ'' . 27` 23 . մար'' . 15` 14 . ղուկ'' . 23` 21 . յօ'' . 18` 30:

Իսկ պիղատոս առեալ զջուր, լուանայ զձեռըս իւր յանդիման հրէական ամբոխին, ասելով. անպարտ եմ ես յարենէ արդարոյդ, դուք գիտասջիք: մատ'' . իէ'' . 24:

Զ՛ուր լուանաս զձեռս քո արտաքուստ ո՛վ պիղատոս՝ որովհետև խիղճ մտաց քո պղծեալ կայ ՚ի ներքուստ, թէպէտ զձեռս լուանաս՝ այլ ո՛չ զգործդ, թէպէտ զձեռսդ սրբեալ համարիս յարենէ արդարոյդ՝ բայց գործովք թաթաւես զնոյն ՚ի մէջ արեան, եթէ

զարդարութեան վկայես, հիմ ապա առ հերով-
դէս առաքես ․ և վէրս 'ի վէրս վերայն Յին
յաւելուս ․ եթէ ուղիղ ես դատաւոր, զմե
զխրատունդ թխպրես, զանպարտականն Յս
բաջաղմամբք հրէից` 'ի մահ մատնելով, որով
հետև յառաջագոյն իսկ ասացեր թէ իշխա-
նութիւնիմ արձակել զքեզ:

Ուրեմն անիրաւ է ատեան քո, անիրաւ դա
տաւորութի քո, անիրաւ դատաստան քո, և
անիրաւ վճիռ քո:

Նա՜կարի քաջիրաւ ես, եթէ զձեռս լուա-
նաս ․ Ո՞չ ապա ասացին հրէիցդ անպատուք
'խտարդարութեան աղաղակեն ահա ասելով թէ
արիւնդ դորա 'ի մեզ և 'ի վերայ որդւոց մերոց, 'ի խաչ հա՛ն
զդա ։ Մատթ՛՛ 27` 25:

Զորդ` պիղատոս 'ի հաճոյս և 'ի դիւրութի
կամացն հրէից դնէ ահա զվճիռ ձաղկեցմանն
Յի, օրինակ զայս:

,, Զ Յն նազովրեցի զայր խռովարար և մոլոր-
,, ական օրինացն քամահօղ ․ 'ի ձեռն քա
,, հանայապետաց և իշխանաց ազգին իւրոյ
,, զամբաստանեալ, մերկացուցէք, կապեցէք
և ձաղկեսջէ ձաղկեցէք, մինչ դահճիք պատ
րաստեն զձաղկելսն:

Անդ առեալ զինուորացն, ածեն զՅն 'ի դա-
հլիճն ․ և մերկացուցեալ, այպանեն զնա,
ծեծեն եղեգամբ, և 'ի ծունր իջեալ, ասեն



ողջ լեր թագաւոր հրէից:

Յետոյ յորժամ հրամայէ պիղատոս մատուցա-
նել առաջի զՅն անպատուամ անարգանօք
ակն յանդիման հրէից, ասելով, ահա այր ձեր
Յովհ. ժթ՛՛ 19` 5:

Իսկ նքա ցամաքեալ գոլով 'ի գթութէ, խրոխտ
տեսին զՅն ․ աղաղակեն բարձրաձայն 'ի խաչ հա՛ն,
'ի խաչ հա՛ն զդա ․ Յով՛՛ 19 6 ․ ուստի և պիղատոս գրէ
զայլ վճիռ մն խաչելութեան Յի օրինակ զայս:
,, Յն նազովրեցի կործանիչ ազգին, քամահօղ
,, կայսերն և սուտ մեսիա, որպէս վկայութեամբ
,, մեծամեծաց ազգին իւրոյ հաստատեցաւ,
,, տարեալ լերին կալուարիոյ հասարակ պատ-
,, ժոյ և խաչեսցի 'ի մէջ երկուց աւազակաց
,, ուստի դահիճն պատրաստեսցէ զխաչն:

Ընկալեալ զինուորացն զայս դատավճիռ,
մերկացուցանեն ահա 'ի նմանէ զքղամիդն, և
զհերն զգեցուցեալ նմ զհանդերձն ․ վարեն
'ի գողգոթայ` խաչն զանմեղ գառն 'ի սպանդ
մահու, բազմամբոխ հանդիսիւ, բարձ-
րաձայն աղաղակաւ և հնչեցմամբ փողոյ:

Մատանօր քաղցր է ինձ լսել 'ի բանից աստի
և լսել զբարբառ ողբոց տն իմոյ Յի, որ ա-
մենօրհնեալ մայրն իւր բարբառէ յօրինէ:

Որ ես մայր իմ` դու բաղձա_ լի.
Միթէ և քեզ` եմ ատե_ լի:
Փութա և տես` զիս քո զոր_ գի.

Զի՞ արդ այսօր՝ թագաւո-րի։
Մահ պսակ՝ ունիմ մի-շեայ.
Ոչ յերկուցեալ՝ ի կեփա-գեայ։
Զ գաւազան՝ արքունա-կան.
Բառնան յիմոյս՝ վերայ թի-կան։
Զ փայտեղէն՝ խաչն ի-մա.
Յորմէ սէր քո՝ յոյժ վշտա-նայ։
Ի յերգ արեան՝ զիս օծա-նեն.
Եզ սասակի գան՝ արբուցա-նեն։
Նան ապաւածք՝ ի վերայ-իմ.
Բայց յայնցանէ՝ ոչ սփո-փիմ։
Դու եկ ով իմ՝ ազնուա-կան.
Մայր բազմագութ՝ և անճը-ման։
Տես բազմավիշտ՝ աղքատ որ-դիս.
Լեր մխիթար՝ ինձ ցաւա-ծիս։

Եւ յետ այսորիկ դիմէ սրբազան Սեւտա-բանիւքն Յովհաննէս առ մէ Ծածկին արտասուք յաչս, գունծ մահու ի բերան, կսկծա-գին այսու ողբերգութ։

Ով մայր ողորմութե՝ որ է միածին որդին քոյ։

Ով թագուհի թագաւորեաց՝ որ է փառք և պսակն քոյ։

Ով Աստղ առաւօտեան՝ որ է ճաճանչ լուսոյ քոյ։

Ով գանձարան անմահ արքային՝ որ է անգին մարգարիտն քոյ։



Ով

Ով սափոր ոսկեղէն՝ որ է երկնային մա-նանայն քոյ։

Ով ծաղկեալ գաւազան Ահարոնեան՝ որ է քաղցրահամ պտուղն քոյ։

Ով բարունակ երկնաբերձ՝ որ է ուրախարար ողկոյզն քոյ։

Ով դաստիարակ Էմմանուէլի՝ որ է Տէր և Աստուածային մեր։

Զի՞ եսկաս և մնաս ամենայնօր մայր սուրբ զի՞նչ կայ քո ի Երուսաղէմ. եւ դնացուք զի՞նչ կայ քո ի երուսաղէմ. եւ ի սամի՛ ահա՛ վիրեն զորդին քո ի մահ խաչի, եւ ի սամի՛ ահա՛ տես զհանդէս միջոյ չարացդ այդ որդին եւ և տես զհանդէս թագաւորութե միածնի որդւոյ քո։

Յառնէ մէ կոյսն փաղփաղակի, և առեալ ի զմարխամ կղկողպայ և զմարխամ մագ-լուր զմարխամ կղէոմպայ, ընթանայ ի առաջ միածնի որ-դասղենացի, ընթանայ ի առաջ միածնի որ-դւոյ իւրոյ։

Եւ մինչ տեսանէ զնա տկարացեալ ի ներ-քոյ ծանրագոյն խաչափայտին, զգլուխն շա-քոյ ծանրագոյն խաչափայտին, զգլուխն Ածային քապատեալ փշովք և զբոլոր իրանն թաթաւեալ արեամբ, սկսանի արտասուօք և հառաչանօք զայս բարբառել։

Բարութեան աղբիւր որդեակ իմ Ո՞վ այդ է որ խաւարեն բարերարութե քո զոր հատուցանեն փոխարէն բարերարութե քո զոր հատուցանեն քեզ ժողովուրդք յիմարք և ոչ իմաստունք։ Համատարած արփի իմ, զի՞ արդ ի մուտ հա-համատարած արփի իմ, զի՞ արդ ի բերան դերձիս, անմեղ գառն իմ, զի՞ արդ ի բերան



գոյ

Ձայլոց հողմոյս · մինչ մխիթարութիւն սրտիս
զհամբոյր անմխիթար ՚ի ցաւս և ՚ի տրտմութեան
թաղձեալ տոգորիս:

Ո՛ ուրախութիւն երկնաւորաց և երկրաւորաց՝
զհամբոյր շրջապատեալ ՚ի կատաղի շանց և գա-
զանաց՝ իբր անօգնական անմեղ վարանիս:

Ո՜ որդեակ իմ կենդանութեան ; որդեակ անհուն
արժանաւորութեան · որպ խառնիս ընդ անօրէն երկրի
և կախաղանիս ՚ի ճանապարհ տոնից:

Ով հրեշտակք երկնից՝ որք ոչ իջանէք յերկիր
առ ՚ի հաւաքել զպատառեալ կենդանոյն արեան զայս:

Զիարդ ոչ հակառակէք զսէր օրհնաբանութեան
ձեր ընդ դէմ աղտեղի անիծաբանութեան և տգե-
ղագոյն հայհոյութեան՝ զոր անարգի սա ՚ի հրէից:

Պատասխանէ Յիսուս և ասէ ցմայրն · վասն էր
եկիր այսր մայր իմ, յաւելուլ զցաւս իմ,
և զցաւս քո, բարւոք գիտեմ ես զի չար-
չարանք իմ՝ է չարչարանք քո · և ցաւք սրտի
իմոյ՝ ցաւք քո:

Դարձիր ով մայր իմ, դարձիր առ օթևանն
քո · զի ոչ վայելէ անարատ մայրութեան քում
երևիլ աստ ՚ի մէջ գողոց և դահճաց:

Դարձիր ով ամենամաքուր աղաւնի՝ դարձիր
՚ի տապան բնակութեան քո, մինչև դադարեսցին
խաղաղ ջուրք հեղեղիս այսորիկ · զի աստ ոչ
գտանես զտեղի, ուր հանգուցանիցես
զոտս մտացքոյ:



Պատ

Պատասխանէ սիրտ մօրն յորդւոյն՝ ով քաղցրա-
գոյն որդեակ իմ, վա՞ էր հրամայես մեկնիլ ինձ
՚ի քէն · զի ուր կարեմ ես գտանել զսփո-
փումն սրտի և զհանգիստ հոգւոյ իմոյ, եթէ
ոչ՝ ՚ի ներկայութեան քում:

Կեանք քո՝ է կեանք իմ, և չարչարանք քո՝
չարչարանք իմ:

Թո՛յլ տուր արտասուաց իմոց ընկերանալ
արեան քում · կամիմ խաչիլ ընդ քեզ և մե-
ռանիլ ընդ մահուան քում:

Կեալն իմ առանց քեզ՝ է դառնագոյն քան
զմահ · և մեռանիլն իմ ընդ քեզ եղիցի վարձք
իմ վասն տալոյ քեզ զկեանս իմ:

Իսկ աստ ժամանեալ ՚ի գողգոթայ, մերկա-
ցուցանեն զՅիսուս մեծաւ ցասմամբ, և տա-
րածեալ ՚ի վերայ խաչափայտին, բևեռեն ՚ի նմին
կսկծագին եղանակաւ:

Սոսկալի է տեսանել զթագաւորն փառաց
մերկ, ծածկեցեալ միայն արեամբն իւրով
յանդիման երկնի և երկրի:

Զոր տեսեալ անմարմին զօրացն հրեշտակաց,
զարհուրեալ գոչեն, որպէս թէ:

„Երկնականքըն զարհուրեալ՝ տեսին զտէրն
„մերկացեալ · և ընդհանդերձսըն բաժանել՝
„պատմուճանին վիճակ արկեալ · ընձեռան և
„զատսըն ծակեցին՝ ըստ յայտնապէս Դաւթեան
„ձայնին · ընդ փայտ խաչին բևեռեցին զմա-



„տունս

„տաճարն որ գրեաց 'ի տախտակին:

Մինն է այսուհետև լսել զձայն հրաժարա- կան ողջունին ոն, զոր տայ ամենևրանուհի մօրն իւրում մարիամու, յանձնելով զնա սիրելի աշակերտին իւրում յովհաննու:

Գոհեմ զքէն՝ (ասէ) անարատ մայր.
որ կուսութեդ՝ զիս ծնար:
Որ բազմիցս՝ յոյժ չարչա- բեալ.
վշտիս որդւոյդ՝ աշխա- տեցար:
Նա մանաւանդ՝ տեսի արդ էն.
զի հուրբ ցաւոյս՝ խորովե- ցար:
Արէ անուն՝ իմ մօրէ- ամ.
զ՚քեզ յաճախեան՝ ոչ մոռա- նամ:
Փոխանակ իմ՝ քեզ յովհան- նէս.
և դու դմ՝ մայր իւկա- պէս:
Ժամ կենաց իմ՝ ահա- լցաւ.
կաց և մնա՛ մայր իմ բա- րեաւ:

Յետ այսորիկ ընկալեալ զերջին փոխա- նակ զովարար ջրոյ՝ ասէ, ամ ինչ կատարեալ է յօ''. 1630: և խոնարհեցուցեալ զգլուխն. աւանդ ետ զհոգին 'ի ձեռս անեղին իւր հօր՝ ըստ կամ- խամձայնութեն դաւթի, թէ 'ի ձեռս քո յանձնեմ զհոգի իմ: սաղ''. 30 6:

Յայնմհետէ զինչ. տեսեալ սէր կուսին զորդին իւր միածին զքաւն սիրոյ ննջեալ 'ի վն խաչին, երգէ ասեա ցաւագին:

Ո՜վ իմ կարմիր վարդ՝ որ- դեալ.
զի՞արդ այդպէս՝ դեղնե- ցար:
Ո՜վ իմ շուշան՝ ծաղիկ որ- դեալ.
զի՞արդ այդպէս՝ թառամե- ցար:
Գլուխդ գանգրահեր որ- դեալ.
զի՞արդ այդպէս՝ խոնարհե- ցար:
Աչքդ կաթամբ՝ լուացեալ որ- դեալ.
զի՞արդ այդպէս՝ արտասուե- ցար:
Ձեռքդ հրաշագործ որ- դեալ.
զի՞արդ այդպէս՝ թուլա- ցար:
Դու էիր անմահն որ- դեալ.
և այժմ
տրտում ոչ ոք՝ էր համեմատ.

Ահա՛ կատարեցաւ օրէնք. ահա՛ լցան մարգ- գարէք, ահա՛ խաղաղ պատանեկին յոտս և 'ի ձեռս անլուծ պրկեցան, ահա՛ խոյն երկնաւոր զկենաբեր ծոյն կախեցաւ, ահա՛ գառն պա- սեքական 'ի սարսափելի մեծի ուրբաթու պատարագեցաւ:

Ահա՛ հեզ և անմռունչ ոչխարն՝ անխնայ 'ի սպանդ մահու վարեցաւ, ահա՛ ապաթոյն օձն պղնձի ձողով խաչին 'ի վեր ամբարձաւ. ահա՛ կեանքն մեր Ք՛ս զխայտէն կենաց ճշմարտա- պէս կախեցեալ տեսաւ, հրեից գայթակղու- թիւն՝ և հեթանոսաց յիմարութի, իսկ մեզ հաւատացելոցս յանուն իւր ո՛ր մշտնջենա- կան յոյս և փրկութիւն:

Արդ՝ ո՛վ քաղցրագոյն և մարդասէր փրկիչ մեր և կեանք. ահա՛ կացեալ առաջոյ կեն- սա

տառու Խաչիդ պատուական, հայցեմք զկա-
թիլ մի արեան քո՝ առ՚ի լուանալ զմեղս մեր։
Որդ·արե՝ խոստովանիմք, զի եմք մեք անար-
ժան. քանզի մեղք և անօրէնութիւնք մեր բաւե-
ւեցին զքեզ 'ի վեր սահմանաւորանց այդորիկ։
Սակայն՝ տեսանելով մեր, զի դու անոխա-
կալ Տէր հայցես 'ի հօրէ զողորմութի վճխա-
ճողացն զքեզ, այնու վստահանամք և մեք
հայցել 'ի քէն զշնորհս ողորմութե քո։
Այցեա զմեզ Տէր կենդանի՝ կեանքդ մեռելոց
և կենդանութի մահացելոց. քանզի ահա քաղա-
քերեալք 'ի խորախուսական բանէ ամ Տ·ռաքե-
րոյն՝ թէ արի որ ննջեալդ և կանգնեցոյ 'ի մե-
ռելոց և լուսաւոր լիցի քեզ Քս, զոր 'ի զղջմանէ
տուել՝ զօրանամք. և զո մարեմայ առ կենդա-
նութի հոգւոյս մեռելոց՝ լալագին դիմօք յոտս
քո փութամք։ Փութա և դու առ մեզ՝ կեան-
քդ մեր Յս, խնայեա գթութ 'ի մեր աղտա-
տուս, շնորհեա համարձակութի փառս տալ
Քս, քեզ զե հօր քում և ամենասուրբ հոգւոյդ
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից,
ամէն։